

Իրավաբանի թափուր հաստիք

Կոնցեռն-Դիալոգ ՓԲԸ

«Կոնցեռն-Դիալոգ» փաստաբանական ընկերությունը աշխատանքի է հրավիրում իրավաբանի՝ պարտքերի հավաքագրման ոլորտում աշխատելու համար:

Պաշտոնը – իրավաբան

Աշխատանքի սկիզբ – հնարավորինս շուտ

Տևողությունը – երկարաժամկետ, 3 ամիս փորձաշրջանով

Վայրը – Երևան, Հայաստանի Հանրապետություն

Աշխատանքի նկարագրություն – Կոնցեռն-Դիալոգ ՓԲ ընկերությունը փնտրում է աշխատակիցների, ովքեր կաշխատեն պարտքերի հավաքագրման թիմում որպես իրավաբան:

Պարտականությունները՝

– Պատրաստել և ուղարկել գրություններ, հայցադիմումներ, բողոքներ և այն իրավական փաստաթղթեր՝ կապված ընդհանուր գույքից պարտապան/ների բաժինն առանձնացնելու պահանջների հետ,

– Հաճախորդների պարտապանների հետ վարել բանակցություններ հաշտության համաձայնություններ կնքելու կապակցությամբ, պատրաստել հաշտության համաձայնությունների տեքստեր,

– Հավաքագրել և դասակարգել համապատասխան փաստաթղթային փաթեթներ

– Կազմել և ղեկավարությանը ներկայացնել ծառայությունների վերաբերյալ հաշվետվություններ

– Կատարել այլ անհրաժեշտ պարտականություններ կապված պարտքերի հավաքագրման հետ

Պահանջվող հմտություններ և կրթություն

– Իրավաբանական կրթություն

– Ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնելու ընթացակարգի, ծառայությունների մատուցման պայմանագրի, վարկային պայմանագրի, գրավի և երաշխավորության ինստիտուտների, ՀՀ քաղաքացիական դատավարության, դատական ակտերի հարկադիր կատարմանը վերաբերող օրենսդրության իմացություն

– Իրավական վերլուծություններ կատարելու, ինչպես նաև իրավական հարցերը համակարգված տեսնելու ունակություն

- Փաստաբանական գործունեության արտոնագրի առկայությունը կամ առաջիկա երկու ամսվա ընթացքում արտոնագիրը ստանալու հնարավորությունը կդիտվի որպես առավելություն

- Համակարգչի և ժամանակակից տեխնոլոգիաների բավարար իմացություն;

- Պատասխանատվության և ազնվության զգացում, ճշտապահություն, կոնֆիդենցիալ (զաղտնի) տեղեկատվության պահպանման ունակություն;

- Թիմային աշխատանքի, սեղմ ժամկետներում և ճնշման տակ աշխատելու ունակություն;

- Մանրութների նկատմամբ ուշադրություն, համբերատարություն

- Նշված ոլորտում աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն

Աշխատավարձը - Բանակցային

Դիմելու ընթացակարգը – Տվյալ թափուր հաստիքին դիմելու համար թեկնածուն կարող է իր ինքնակենսագրականը (CV) ուղարկել career@dialog.am էլ. հասցեին՝ նամակի առարկան (subject) տողում նշելով “իրավաբանի հաստիքի համար”: Ինքնակենսագրականը անհրաժեշտ է ուղարկել .pdf, .doc կամ .docx ֆորմատներով, ֆայլի անվանման մեջ պարտադիր նշելով դիմողի անունը (լատինատառ կամ մետրոպատառ):

Հայտարարության սկիզբը – 22 հոկտեմբերի 2016 թ.

Հայտարարության ավարտը – 31 հոկտեմբերի 2016 թ.

Ընկերության մասին - «Կոնցեռն-Դիալոգ» ՓԲ Ընկերությունը փաստաբանական գրասենյակ է, որը տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն տեղական և արտասահմանյան ընկերություններին: 2011 թվականից ընկերությունը նաև մասնագիտանում պարտքերի հավաքագրման ծառայությունների մատուցման մեջ (հեռահաղորդակցության ոլորտ, բանկեր, վարկային կազմակերպություններ): Ընկերության գործունեությանը ծանոթանալու համար կարող եք այցելել մեր կայքը՝ www.dialog.am: